

Տարոն Վ. Հակոբյան (Ստեփանակերտ)

Պատմ. գիտ. թեկնածու

ԼՂՀ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՆՈՐ ՄԵԿՆԱԿԵՏ ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ*

Բանալի բառեր - Միացյալ Հայաստան, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ, Արցախյան շարժում, ինքնապաշտպանության ուժեր, Կենտրոնական շտաբ, Հայաստանի Հանրապետություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Գերագույն խորհուրդ:

Չնայած ԽՍՀՄ-ի գոյության 70-տարիների ընթացքում գործադրված բռնություններին ու հալածանքներին՝ արցախահայությունը երբեք չի դադարեցրել Մայր Հայաստանին միանալու իր համառ պայքարը: Միութենական հանրապետության կարգավիճակ ունեցող Խորհրդային Հայաստանի և նրանից արհեստականորեն տարանջատված ու Ադրբեջանին բռնակցված Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի մերձեցման ու վերամիավորման քաղաքական ձգտումները Միացյալ Հայաստանի համար պայքարի յուրօրինակ դրսևորումն էին՝ ԽՍՀՄ բռնատիրական վարչակարգի պայմաններում:

Տասնամյակներ շարունակ Խորհրդային Հայաստանում ու Արցախում դիմումների, խնդրագրերի և ժողովրդական հուզումների տեսք ընդունած այդ համառ պայքարի առանձին դրվագները լռեցվել կամ ճնշվել են խորհրդային ղեկավարության կողմից: Եվ միայն 1985 թվականից հետո ԽՍՀՄ-ում ստեղծված համեմատաբար նպաստավոր քաղաքական պայմանները հնարավորություն ընձեռեցին նորից կյանքի կոչելու Միացյալ Հայաստանի գաղափարը, այս անգամ արդեն՝ Արևելյան Հայաստանում պետականորեն կազմակերպված հայության երկու հատվածների վերամիավորման բացահայտ քաղաքական պահանջի տեսքով: Գորբաչովյան այսպես կոչված «վերակառուցման» քաղաքականությունը նպաստեց արցախահայության քաղաքական պայքարի ծավալմանը, և ազատագրումն աղբրեջանական բռնատիրությունից դարձավ օրակարգի հարց: Իսկ ավելի ուշ՝ ԽՍՀՄ-ի փլուզման արդյունքում, Շարժման սևեռուն նպատակը՝ «Միացումը», փոխակերպվեց անջատումի միջոցով անկախության նվաճման հիմնախնդրի, որը երկարաձգում, բայց ամենևին էլ չի շրջափակում Միացյալին հասնելու ուղիները:

1980-ական թվականների կեսերից Արցախում մտավորականության և ուսանողության շրջանում սկսեցին բարձրաձայն քննարկվել ԼՂՀ-ում տասնամյակ-

* Ընդունվել է տպագրության 20. 08. 2019:

ներ շարունակ կուտակված քաղաքական, տնտեսական, մշակութային հիմնահարցերը՝ մատնանշելով հայկական երկրամասը Մայր Հայաստանին վերամիավորելու հրամայական անհրաժեշտությունը:

Քննարկվող հարցերին ընթացք տալու նպատակով 1986 թ. ապրիլից Ստեփանակերտում սկսեց գործել «Արցախյան միություն» կազմակերպությունը¹, որի ստեղծման գործում մեծ դերակատարություն ունեցան Իգոր Մուրադյանը, Արթուր Մկրտչյանը, Մանվել Սարգսյանը, Էմիլ Աբրահամյանը, Արկադի Կարապետյանը և այլք: Վերոհիշյալ միության մեջ ընդգրկված էին նաև ուսանողները, որոնք ձեռք բերեցին ընդհատակյա պայքարի փորձ՝ հետագայում ստանձնելով Արցախի երիտասարդության կազմակերպման, նրա գաղափարական կողմնորոշման և իրենց հետևից տանելու առաքելությունը:

1987 թ. երկրորդ կեսին ազգային-ազատագրական պայքարն Արցախում նոր թափ ստացավ: Շարժման մեջ ներգրավվածները սկզբնական շրջանում հարցի լուծումը փնտրում էին Խորհրդային Միության նոր ղեկավարության հետ ակտիվ շփումների մեջ: Շարժման ղեկավարությունն ամեն առիթով փորձում էր մոսկովյան աստիճաններում արցախցիների պայքարը ներկայացնել «վերակառուցման» և հրապարակայնության գաղափարների լույսի ներքո՝ նրան օրինական տեսք տալու համար:

Դրա առաջին արտահայտությունը դարձավ 1987 թ. օգոստոս - հոկտեմբեր ամիսներին Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու նպատակով կազմակերպված յուրօրինակ հանրաքվեն, որի ընթացքում հավաքվեց շուրջ 80 հազար ստորագրություն²: Նույն ժամանակահատվածում ԽՍՀՄ կուսակցական ու պետական կենտրոնական մարմիններն ընդունել են ԼՂԻՄ հայության ներկայացուցիչների չորս պատվիրակություններ, որոնց հավաստիացրել են, թե մոտ ապագայում Արցախի հիմնահարցն արդարացի լուծում կստանա: Արցախյան պատվիրակության անդամները մոսկովյան առաջին այցի ժամանակ ոչ պաշտոնական հանրաքվեի ընթացքում հավաքած 80 հազար ստորագրությունները ներկայացրել են ԽՍՀՄ ղեկավարությանը:

Ոգևորված կենտրոնական իշխանությունների բարյացակամ վերաբերմունքից՝ մարզի բոլոր գյուղերում, ձեռնարկություններում, կազմակերպություններում տեղի ունեցան կոլեկտիվների ժողովներ, որոնցում որոշումներ ընդունվեցին ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու վերաբերյալ: Դրանց հիման վրա մարզի շրջանների ժողովրդական պատգամավորների խորհուրդները ևս նմանատիպ որոշումներ կայացրին³: Միաժամանակ՝ Ստեփանակերտում և մարզի շրջկենտրոններում սկսեցին բազմամարդ հանրահավաքներ կազմակերպվել:

1988 թ. փետրվարի 13-ին Շարժման ակտիվիստները Ստեփանակերտի Մանկավարժական ինստիտուտի դասախոսների և ուսանողների հետ ինքնաբերական

1 Տե՛ս **Քալայան Վ.**, Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության (1813-2007 թթ.), «Սոնա», Ստեփանակերտ, 2012, էջ 278:
 2 Տե՛ս «ԼՂ Հանրապետություն», 22. 01.1998:
 3 Տե՛ս **Քալայան Վ.**, նույն տեղում, էջ 280:

ցույց կազմակերպեցին: Այդ օրվանից Ղարաբաղյան շարժումը համաժողովրդական և աննահանջ պայքարի բնույթ ստացավ:

Ընդառաջ գնալով մարզի հայ բնակչության ցանկություններին՝ 1988 թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի նստաշրջանը ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից հանելու և Հայկական ԽՍՀ կազմի մեջ մտցնելու հարցով Ադրբեջանական ԽՍՀ և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդների առջև միջնորդելու մասին որոշում ընդունեց⁴:

Սակայն ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոն, 1988 թ. փետրվարի 21-ին մերժելով ժողովուրդների ինքնորոշման միջազգային սկզբունքը, փորձ արեց հիմնահարցի քաղաքական լուծումը փոխարինել սոցիալ-տնտեսական բնույթի տարբեր միջոցառումներով, ինչն էլ հարուցեց մարզի բնակչության խիստ դժգոհությունը:

Անտեսելով հայ բնակչության ինքնորոշման իրավունքը և ներկայացված պահանջի իրավաքաղաքական հիմնավորվածությունը՝ Ադրբեջանը Մոսկվայի հովանավորությամբ նորից նախընտրեց հարցի կարգավորման, ավելի ճիշտ՝ մերժման ոչ քաղաքակիրթ մեթոդները՝ կազմակերպելով էթնիկ զուտումներ: Դա արդեն քաղաքական ահաբեկչություն էր արցախահայության և ամբողջ հայ ժողովրդի հանդեպ: Խորհրդային զորքերի օգնությամբ հրկիզվեցին ու ավերվեցին հայկական բնակավայրերը, որը Ադրբեջանի տարածքում հայ բնակչության հանդեպ սկսվեց զանգվածային մարդաորս. կարծես կրկնվում էին 1915 թ. իրադարձությունները՝ ամենուրեք տեղահանված հայ բնակչություն և անմեղ զոհեր: Այս իրավիճակը պահպանվեց մինչև 1991 թվականը, երբ նշմարվեց ԽՍՀՄ-ի լուծարման հեռանկարը:

Վերոնշյալ սպառնալիքների ֆոնին՝ 1988 թ. փետրվարյան բուռն իրադարձությունների բովում ծնված ինքնապաշտպանության գաղափարը դարձավ հրամայական անհրաժեշտություն: Ստեփանակերտում և շրջաններում թաղային և համայնքային սկզբունքներով ծնունդ առան ընդհատակյա ինքնապաշտպանական ջոկատներ:

Հատկանշական է, որ հայրենիք վերադարձած ՀՅ Դաշնակցությունը, լինելով Միացյալ Հայաստանի գաղափարի կրողը, նոր մարտահրավերներին դիմակայելու նպատակով անմիջապես իր վրա վերցրեց ինքնապաշտպանական ջոկատների ստեղծման և զինման գործը: Արցախի ժողովուրդը կրկին իր կողքին զգաց ՀՅԴ ներկայությունը, և, փաստորեն, ՀՅԴ-ն և արցախահայությունը ազատագրական պայքարի միաձուլող քուրայում իրար հանդիպեցին և մեկ բռունցք դարձան:

Ընդառաջ գնալով օրվա հրամայականին՝ ՀՅԴ գործիչները տեղի հայրենասիրական ուժերի հետ միասին առաջին գործնական քայլերը ձեռնարկեցին ինքնապաշտպանական ջոկատները միավորելու ուղղությամբ: 1991 թ. սկզբին Ար-

4 Տե՛ս **Քալայան Վ.**, Հակոբյան Տ., Պատմական նստաշրջան, ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների 20-րդ նիստի արձանագրությունը, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ստեփանակերտ, ԱրՊՀ, 2008, էջ 12:

ցախում արդեն գործում էր կենտրոնական շտաբը, որը Արցախի պաշտպանության կազմակերպման գործը սկսեց համակարգել մեկ կենտրոնից: Շտաբի պետ և ինքնապաշտպանության ուժերի առաջին հրամանատար դարձավ Արկադի Կարապետյանը (Դաշնակ Ազո): Յուրաքանչյուր շրջան ուներ իր հրամանատարությունը, որը ենթարկվում էր կենտրոնական շտաբին (բացառությամբ մի քանի ջոկատների): Կենտրոնական շտաբին կից ստեղծվել էր 7 հոգուց բաղկացած, այսպես կոչված, «Կորդինացիոն խորհուրդ», որի կազմում ընդգրկված էին Արցախում գործող քաղաքական ուժերի ներկայացուցիչները: Ինքնապաշտպանական ուժերը մարտական առաջին մկրտությունը ստացան Հյուսիսային Արցախում և Հադրութում:

Միաժամանակ նշենք, որ ինքնապաշտպանության գործը կանոնավոր հունի մեջ դնելուն զուգընթաց ՀՅԴ ղեկավարությունը քայլեր էր ձեռնարկում նաև Արցախում որպես կազմակերպություն հիմնավորվելու համար: 1989 թ. Արցախի տարբեր շրջաններում ձևավորվեցին առաջին դաշնակցական խմբերը, որոնց հիմքի վրա էլ կազմավորվեց ՀՅԴ Արցախի «Ապառաժի» մարմինը:

Այսպիսով, արցախահայության ինքնորոշման համար 1918-1923 թթ. պայքարը, տևական ժամանակահատվածում մնալով անթեղված, 1988 թ. փետրվարյան հայտնի դեպքերով նոր փուլ մտավ:

Արտաքուստ թվում էր, թե Հայաստանում և Արցախում ընդհանուր շարժումը ղեկավարվում է մեկ կենտրոնի կողմից, սակայն վերլուծելով պատմական դեպքերը և քաղաքական իրադարձությունների հաջորդականությունը՝ գալիս ենք այն համոզման, որ որքան էլ դա պարադոքս է, նրա ղեկավարման հիմքում կանգնած էին իրար հակոտնյա երկու քաղաքական ուժեր:

Ինչպես ցույց է տալիս պատմությունը, Խորհրդային Հայաստանում ևս համազգային շարժումը սկզբնավորվեց համաժողովրդական զարթոնքի հորձանուտում: Սկզբում այն ղեկավարվում էր ազգային մտածելակերպ ունեցող մտավորականության և ազգային գաղափարախոսությամբ տոգորված երիտասարդների կողմից: Թեև Հայաստանի կոմունիստական կուսակցության ղեկավարությունը ևս ջանքեր էր գործադրում շարժումը գլխավորելու համար, սակայն հաջողության չհասավ: Արցախյան շարժումը ներդաշնակելու, համակարգելու նպատակով ստեղծվեց «Ղարաբաղ» կոմիտեն, որն իր մասնաճյուղերը հիմնեց հանրապետության շրջաններում: Սակայն Հայաստանում շարժումը թափ հավաքելուց հետո տեղի ունեցավ նրա ղեկավարության փոփոխությունը: Ոչ առանց Խորհրդային Հայաստանի ուժային կառույցների միջամտության ձևավորված նոր ղեկավարության («Ղարաբաղ» կոմիտեի նոր կազմի) մեջ ընդգրկվեցին խորհրդային հատուկ ծառայությունների հետ կապված անձինք, ովքեր կարողացան փոխել նրա ընթացքը և ուղղությունը՝ ազգային նպատակներից անցնելով ԽՍՀՄ ժողովրդավարացման համար ընդհանուր պայքարի հուն: Այսօր նրանց գործունեության պատմությունը դեռևս պարուրված է խորհրդավորության շղարշով: Բայց ավելի քան ակնհայտ է, որ «Միացումի» սկզբունքով առաջնորդվող «Ղարաբաղ» կոմիտեի առաջին կազմի մեկուսացումը և

նոր կազմի ձևավորումը բացատրելի են միայն նման քաղաքական նպատակների առկայության համատեքստում:

Սակայն Արցախում գործընթացներն այլ կերպ էին ընթանում: Այստեղ բացի ազգային-ազատագրական պայքարի գաղափարով առաջնորդվող հայրենասիրական ուժերից ներգրավվել էր նաև կուսակցական ակտիվը, ինչպես նաև հիմնարկ ձեռնարկությունների ղեկավարները: Վերջիններիս մի մասի ակտիվ մասնակցությունը միանգամայն համահունչ էր Հայաստանում Ղարաբաղյան շարժման ղեկը «Միացումի» կողմնակիցներից խլած «վերակառուցման» դարաշրջանի ժողովրդավարների նպատակներին:

Ուստի Հայաստանում ու Արցախում միմյանցից տարանջատված ազգային ու ժողովրդավարական ուժերի հետագա բյուրեղացման արդյունքում ձևավորվեցին երկու հակառակ ուղղություններ: Մի ուղղությունն Ադրբեջանի ագրեսիային սկզբում պատասխանում էր խաղաղ երկխոսության քաղաքականությամբ, ինչը հետագայում չարդարացրեց իրեն: Դրան զուգահեռ ընթանում էր այլ գործընթաց՝ զինված ինքնապաշտպանության կազմակերպումը: Մեկ անգամ ևս փաստենք, որ այս խնդիրը լուծելու գործում վճռական դեր խաղաց ՀՅԴ-ն: Նա աննախադեպ թափ հաղորդեց ազգային-ազատագրական շարժմանը՝ իր մեջ ներառելով «Միացումի» կողմնակիցներին: ՀՅԴ-ի ակտիվությունը, ըստ երևույթին, գործի մղեց նաև Հայաստանում Ղարաբաղյան շարժումը ժողովրդավարացման համար ընդհանուր պայքարի հուն տեղափոխած ՀՀԸ-ին: Նրա խողովակով նույնպես սկսվեցին զենքի մատակարարումները և ինքնապաշտպանական ջոկատների ստեղծումը: Սա չէր կարող չառաջացնել Ղարաբաղյան շարժման առաջնորդների նոր խմբավորում. նախկին խորհրդային կուսակցական ակտիվի, ինչպես նաև հիմնարկ ձեռնարկությունների ղեկավարների շրջանում հայտնվեցին Լ. Տեր-Պետրոսյանի կողմնակիցները, բայց ակտիվ գործիչների հիմնական մասն ընդգրկվեց ՀՅԴ-ի մեջ⁵:

Միաժամանակ ընդգծենք, որ այդ գործիչներից ոմանք ներթափանցեցին Հայաստանում ու Արցախում գործող քաղաքական ուժերի շարքերը՝ իրենց անցյալը քողարկելու կամ ինքնամաքրվելու նպատակով: Մի մասը նույնիսկ ակտիվ մասնակցություն ունեցավ Արցախի և Հայաստանի պետականության կերտման գործընթացում՝ հանդես գալով իրենց համար խորթ ազգային դիմակներով:

Արցախահայության վիճակը ավելի ծանրացավ ԽՍՀՄ լուծարման նախաշեմին: 1991 թ. օգոստոսից հետո ԽՍՀՄ-ի փլուզման գործընթացի արագացման համատեքստում ստեղծվեց քաղաքական նոր իրադրություն. օգտվելով նպաստավոր պայմաններից՝ ԽՍՀՄ տարածքում գտնվող ազգային միավորումները հռչակեցին իրենց անկախությունը, որպեսզի չմնան կայսրության փլատակների տակ:

5 Տե՛ս Հակոբյան Տ., ԼՂՀ հռչակումը և պետական շինարարության գործընթացը (1991-1994 թթ.), Եր., «Էդիթ Պրինտ», 2011, էջ 40:

Մինչ այդ ԽՍՀՄ պետական բարձրագույն օրենսդիր ատյանը 1990 թ. ապրիլի 3-ին ընդունել էր «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետությունների դուրս գալու հետ առնչվող հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքը: Այս օրենքը հաստակեցնում էր ոչ միայն բոլոր միութենական հանրապետությունների, այլև ինքնավար կազմավորումների, անգամ ինքնավար շրջանների, և հոժ ապրող ազգային խմբերի՝ ԽՍՀՄ-ից դուրս գալու իրավական հիմունքները: Օրենքի 3-րդ հոդվածում ասվում էր. «Իր կազմում ինքնավար հանրապետություններ, ինքնավար մարզեր ու շրջաններ ունեցող միութենական հանրապետություններում հանրաքվեն անց է կացվում յուրաքանչյուր ինքնավարության հաշվով առանձին: Ինքնավար հանրապետությունների և կազմավորումների ժողովուրդներին է մնում ԽՍՀՄ-ում կամ դուրս ելող միութենական հանրապետությունում մնալու, ինչպես նաև իր պետական կարգավիճակի հարցը դնելու իրավունքը: Այն միութենական հանրապետությունում, որտեղ կան տվյալ վայրի բնակչության մեծամասնությունը կազմող և հոժ թվով բնակվող ազգային խմբերի տարածքներ, հանրաքվեն հանրագումարելիս քվեարկության արդյունքները հաշվի են առնվում առանձին»⁶:

Այդ օրենքի ընդունման օրից հոժ բնակվող ազգային խմբերը ԽՍՀՄ-ի լուծարման պարագայում ԽՍՀՄ պետական իրավունքի կրողներ էին դարձել:

Բայց հիմք ընդունելով հենց 1990 թ. ապրիլի 3-ի օրենքը՝ Ադրբեջանի ԳԽ-ն 1991 թ. օգոստոսի 30-ին ընդունում է «Ադրբեջանի Հանրապետության անկախության վերականգնման մասին» հռչակագիրը, որով Բաքուն հրաժարվում է Ադրբեջանական ԽՍՀ-ի իրավահաջորդությունից և վերականգնում 1918-1920թթ. գոյություն ունեցած ԱՀ-ի պետականությունը: Իսկ հոկտեմբերի 18-ին ընդունվեց Ադրբեջանի Հանրապետության պետական անկախության մասին սահմանադրական ակտը, որով Բաքուն ամրագրեց իր հրաժարումը Ադրբեջանական ԽՍՀ-ի իրավահաջորդությունից:

Պետք է ընդգծել, որ Բաքուն, վերադառնալով 1918-1920 թթ. իրողություններին, վերականգնեց Ազգերի լիզայի կողմից դե-յուրե չճանաչված մուսավաթական ԱՀ-ի պետականությունը, որը չունեի ճանաչված, լեգիտիմ սահմաններ և չէր վերահսկում ո՛չ Լեռնային Ղարաբաղը և ո՛չ էլ Նախիջևանը: Նկատենք նաև, որ Ադրբեջանի անկախությունը ընդունվեց ոչ թե հանրաքվեի արդյունքում, այլ հայտարարվեց հանրապետության գերագույն օրենսդիր մարմնի կողմից, որի կազմի մեջ չկար ներկայացուցիչ ո՛չ ԼՂԻՄ-ից և ո՛չ էլ այլ հայաբնակ տարածքներից: Մյուս կողմից էլ՝ Հայաստանի ՀՀԾ-ական իշխանությունը լիովին չէր կողմնորոշվել Արցախի վերամիավորման՝ համայն հայության պահանջի հարցում: 1991 թ. սեպտեմբերի 2-ին Մոսկվայում կայացած ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների արտահերթ նստաշրջանում Լ. Տեր-Պետրոսյանը պահանջեց միայն բարձրացնել ինքնավար մարզի կարգավիճակը⁷:

6 «Արցախ», Ստեփանակերտ, 26.08.1993:

7 Տե՛ս **Բալայան Վ.**, նշվ. աշխ., էջ 299:

Ստեղծված անորոշության պայմաններում հաշվի առնելով Հայաստանի հետ վերամիավորման պահանջի բավարարման անհնարինությունը ԽՍՀՄ-ում ու միջազգային որոշ կազմակերպություններում, ինչպես նաև խնդիրը՝ որպես Հայաստանի՝ Ադրբեջանի նկատմամբ տարածքային հավակնություն դիտվելու վտանգը, ինչը կարող էր անկասելի դարձնել հայ-ադրբեջանական պատերազմը, ԼՂ իշխանությունները ընտրեցին միակ ճիշտ, հանգրվանային տարբերակը՝ սեպտեմբերի 2-ին ընդունելով ԼՂՀ անկախության մասին հռչակագիր: Դրանով ԼՂ-ն մի կողմից՝ իրեն հայտարարեց Ադրբեջանից դուրս, մյուս կողմից՝ առերես հրաժարվեց Հայաստանի հետ վերամիավորումից: Այդ պահից փոխվեց Արցախյան շարժման բնույթը, և այն ընդունեց անկախ պետականություն կերտելու շեշտված ուղղվածություն: Այսպիսով, ԽՍՀՄ-ի լուծարման արդյունքում նախկին Ադր. ԽՍՀ-ի տարածքում կազմավորվեցին երկու անկախ պետություններ՝ ԼՂՀ-ն և Ադրբեջանի Հանրապետությունը (ԱՀ): ԼՂՀ-ի հռչակումից հետո սկսվեց նոր իշխանական կառույցների, առաջին հերթին՝ օրենսդիր մարմնի՝ ԳԽ-ի ձևավորման գործընթացը: Պետական և ռազմական շինարարության խնդիրները լուծվում էին չընդհատվող ռազմական գործողությունների պայմաններում: ԼՂՀ առաջին գումարման ԳԽ-ում, որը հետագայում անվանվեց ԼՂՀ խորհրդարան (այժմ՝ ԼՂՀ Ազգային ժողով), պետք է ընտրվեր 81 պատգամավոր: Ընտրությունների օր նշանակվեց 1991 թ. դեկտեմբերի 28-ը: Կազմավորվեց 81 ընտրատարածք⁸:

1991 թ. դեկտեմբերի 28-ին կայացան ԼՂՀ ԳԽ ընտրությունները, որոնք անցկացվեցին մեծամասնական ընտրակարգով՝ ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ:

Հանրապետության ԳԽ ընտրությունների մասին տեղյակ էին պահվել Շուշիի և ադրբեջանական մյուս բնակավայրերի բնակիչները: Ադրբեջանցիները կատարեցին Ա. Մուֆալիբովի հրամանը և չմասնակցեցին ընտրություններին, ինչպես որ չէին մասնակցել հանրաքվեին⁹:

ԼՂՀ ԳԽ ընտրություններից հետո՝ 1992 թ. հունվարի 6-ին, Ստեփանակերտում՝ նախկին մարզխորհրդի նիստերի դահլիճում, 80 դիտորդների ու լրագրողների ներկայությամբ «Հայր մեր» տերունական աղոթքով իր աշխատանքներն սկսեց ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանը: Նույն օրն ընդունվեց «ԼՂՀ պետական անկախության հռչակագիրը»¹⁰: Հանրապետության սահմանները պաշտպանելու և բնակչության անվտանգությունն ապահովելու համար հենց առաջին նիստում որոշվեց ստեղծել ԼՂՀ իշխանության բարձրագույն մարմիններին ենթակա սեփական ռազմական ուժեր, հասարակական կարգի պահպանության ու պետական անվտանգության մարմիններ և բոլոր ռազմական ուժերը միավորել մեկ հրամանատարության ներքո:

8 Տե՛ս **Օհանջանյան Մ.**, Անկախության քայլերը, ԼՂՀ-ում անցկացված հանրաքվեն և ընտրությունները (1991-1998), Ստեփանակերտ, «Սոնա», 1998, էջ 12:

9 Տե՛ս **Հակոբյան Տ.**, 02վ. աշխ., էջ 35:

10 Տե՛ս **Արտյոնյան Բ.**, События в Нагорном Карабахе, хроника, часть IV, январь 1992 г. - июль, Ереван, изд. «Гитутюн» НАН РА, 1997, էջ 109:

Հունվարի 7-ի նիստում պատգամավորները ձեռնամուխ եղան ԳԻ նախագահի ընտրության հարցի քննարկմանը: Առաջադրվեցին 7 թեկնածուներ՝ Լ. Պետրոսյան, Օ. Եսայան, Ռ. Քոչարյան, Ա. Մկրտչյան, Լ. Մելիք-Շահնազարյան, Ա. Մանուչարով և Շ. Մեղոյան: Թեկնածուներից հինգը ինքնաբացարկ հայտարարեցին, և մնացին Ա. Մկրտչյանն ու Լ. Պետրոսյանը: Մի քանի անգամ քվեարկություն կատարվելուց հետո 42 ձայնով ԼՂՀ ԳԻ առաջին նախագահ ընտրվեց ՀՅԴ անդամ, պատմական գիտությունների թեկնածու, 33-ամյա Ա. Մկրտչյանը: Ստեղծվեց նաև Նախարարների խորհուրդ (ՆԽ), որի նախագահ հաստատվեց Օ. Եսայանը, իսկ տեղակալ՝ Բ. Առուշանյանը: Ընտրված պատգամավորների մեծամասնությունը ՀՅԴ անդամներ էին: Սակայն ԳԻ նախագահի ընտրություններում հաղթանակ տանելով՝ ՀՅԴ-ն որոշում ընդունեց երկրում ներքաղաքական կայունությունը պահպանելու նպատակով մի շարք կարևոր ղեկավար պաշտոններ, այդ թվում՝ ՆԽ նախագահինը, հանձնել մյուս քաղաքական ուժերին: ԼՂՀ ԳԻ նախագահ Ա. Մկրտչյանի առաջարկով ԼՂՀ ԳԻ նախագահի առաջին տեղակալի պաշտոնի համար առաջադրվեց Ռ. Քոչարյանի թեկնածությունը, սակայն փակ գաղտնի քվեարկության ժամանակ թեկնածուն անհրաժեշտ քվեներ չստացավ: Նախագահի առաջին տեղակալի պաշտոնը մնաց թափուր¹¹:

Հունվարի 11-ին տեղի ունեցան ԼՂՀ ԳԻ պատգամավորների լրացուցիչ ընտրություններ. 11 թափուր տեղի համար ընտրվեց 9 պատգամավոր, որոնց իրավունքները հաստատվեցին ԳԻ նստաշրջանի հունվարի 17-ի նիստում: Նույն օրը ԼՂՀ ԳԻ նախագահի տեղակալ ընտրվեց ՀՅԴ անդամ Գ. Պետրոսյանը, քարտուղար՝ պատմական գիտությունների թեկնածու, անկուսակցական Վ. Հակոբյանը¹²:

ԳԻ նստաշրջանն ընդունեց «Արտակարգ դրության մասին» օրենքը: Ապա կազմավորվեցին ԳԻ մշտական հանձնաժողովները¹³ և հետևյալ խումբ-խմբակցությունները՝ ՀՅԴ խմբակցություն, «Արցախի ժողովրդական ճակատ» պատգամավորական խումբ, «Մարտակերտցիների խումբ», «Միացում» պատգամավորական խումբ, չեզոք անդամներ ու զինվորականներ:

Սակայն ՀՅԴ-ի՝ ԼՂՀ-ում կայացած ժողովրդավարական ընտրությունների միջոցով տեղի ունեցած հաղթանակը քաղաքական ցնցում հանդիսացավ Հայաստանի նոր իշխանության համար, որը տակավին չէր հասցրել հասկանալ, թե ինչ է կատարվում Արցախում: ԼՂՀ ԳԻ նստաշրջանն սկսվելուց մի քանի օր առաջ՝ հունվարի 3-ին, Ստեփանակերտ էր ուղարկվել Հայաստանի Հանրապետության ԳԻ-ի դիմումը: Այդ փաստաթղթում նշված էր, որ արցախահայության ազգային-ազատագրական պայքարը թևակոխել է նոր՝ պետականության հաստատման շրջան: ՀՀ ԳԻ-ն համոզված էր, որ այն կընթանա ժողովրդավարական նորմերին համապատասխան՝ դրանով օրինական հիմքի վրա դնելով ԼՂՀ քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը: Այնուհետև ասված էր, թե ՀՀ ԳԻ-ն ողջ հայ ժողովրդի անունից հավաստիացնում է ԼՂՀ ԳԻ-ին, որ բոլոր

11 Տե՛ս Հակոբյան Տ., նշվ. աշխ., էջ 37:

12 Տե՛ս Աբրահամյան Հ., Աբրահամյան Հ., Ճակատագրին ընդառաջ, Եր., «Ամարաս», 2001, էջ 152:

13 Տե՛ս Հակոբյան Տ., նշվ. աշխ., էջ 39:

միջոցներով զորավիգ կլինի Արցախի պետականության հաստատմանն ու ամրապնդմանը: Սակայն մի քանի օր անց պարզվեց, որ վերոհիշյալ դիմումը պարզապես քաղաքական դեմարշ էր. ՀՀ-ի ՀՀԾ-ական իշխանությունները չէին սպասում դեպքերի նման ընթացքին, և հունվարի 12-ին, երբ ՀՀ ԳԽ նախագահության նիստի ժամանակ առաջարկվեց շնորհավորանքի խոսք հղել ԼՂՀ նորընտիր իշխանություններին, նախագահության 12 անդամներից Է. Եգորյանը և Ա. Ոսկանյանը դեմ քվեարկեցին՝ շատ լավ իմանալով, որ որոշում ընդունելու համար անհրաժեշտ է 11 ձայն: Այսպիսով, ՀՀ ԳԽ-ն չշնորհավորեց ԼՂՀ նորընտիր իշխանություններին¹⁴: Պատճառը պարզ էր. Արցախում իշխանության էին եկել ՀՀ-ի ՀՀԾ-ական ղեկավարության համար ոչ ցանկալի ուժեր: Փաստորեն, պաշտոնական Երևանը ԼՂՀ-ի համար այդ դժվարին պայմաններում բացահայտ քաղաքական առճակատման գնաց Ստեփանակերտի հետ: Դրա արտահայտությունը դարձան ԼՂՀ իշխանությունների նկատմամբ ՀՀ ղեկավարության հետագա վերաբերմունքն ու ձեռնարկած քայլերը:

ԼՂՀ ԳԽ նախագահ Ա. Մկրտչյանը հունվարի 26-ից փետրվարի 2-ը կատարեց իր առաջին պաշտոնական այցը Երևան: Պաշտոնական տեղեկագրերում մանրամասներ չեն պահպանվել այդ այցի վերաբերյալ: Սակայն գոյություն ունեն տեսակետներ այն մասին, թե ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը Ա. Մկրտչյանին ընդունել է խիստ սառը և պահանջել է հրաժարական տալ¹⁵:

Իսկ ռազմական իրադրությունը ԼՂՀ-ում շարունակում էր շիկանալ: Օրեցօր սաստկացող մարտական գործողությունները հրամայաբար պահանջում էին կատարելագործել ոչ միայն ինքնապաշտպանական ուժերի (ԻՊՈՒ) կառուցվածքային ու մարտական բնութագրերը, այլ նաև կառավարման համակարգը: Մարտի 4-ի ԳԽ նախագահության նիստում Արցախի ԻՊՈՒ հրամանատար նշանակվեց գնդապետ Ա. Տեր-Թադևոսյանը: Նույն օրը նախագահությունը որոշեց ԼՂՀ ԳԽ 1992 թ. հունվարի 9-ի որոշմանը համապատասխան հաստատել ԼՂՀ պաշտպանության խորհրդի (ՊԽ) կազմը¹⁶:

Այնուհետև ԳԽ նախագահությունը ձեռնամուխ եղավ նաև կառավարության մի շարք պաշտոնների նշանակմանը, ԼՂՀ ՆԽ կազմը հաստատելուն, ԼՂՀ կառավարության անհատական կազմի մասին որոշումների նախագծերի քննարկմանը¹⁷: «ԼՂՀ ՆԽ-ի մասին» ԼՂՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան հաստատվեց ԼՂՀ կառավարությունը, և առաջնորդվելով «ԼՂՀ ՆԽ-ի մասին» ԼՂՀ օրենքով՝ վերջինիս հանձնարարվեց անցնել իր պարտականությունների կատարմանը:

Այսպիսով, ոչ վերջնականապես, բայց ձևավորվեց ԼՂՀ գործադիր իշխանությունը, որը պետք է լուծեր երկրին վերաբերող սոցիալ-տնտեսական և մի շարք այլ հարցեր: Սակայն պետք է նշել, որ կազմավորելով ԼՂՀ կառավարությունը՝ ԼՂՀ

14 Տե՛ս Արցախյան Հ., նշվ. աշխ., էջ 153-154:

15 Տե՛ս Հակոբյան Տ., նշվ. աշխ., էջ 42:

16 Տե՛ս ԱՀ պետարխիվ, ֆոնդ 254, ցանկ 1, պահպանման միավոր 2, կապ 1, թերթ 5-6:

17 Տե՛ս նույն տեղում, թ. 11-14:

ԳԽ նախագահությունը գործադիր իշխանության կարևորագույն լիազորություններն իրեն վերապահեց մինչև 1992 թ. օգոստոս (Պաշտպանության պետական կոմիտեի ստեղծումը): Դա մեծապես պայմանավորված էր նրանով, որ իրադրությունը ռազմաճակատում դեռևս անչափ լարված էր և հնարավորություն չէր տալիս ԳԽ նախագահությանը ավարտել իշխանական լիազորությունների օպտիմալ բաշխումը, կառավարման համակարգի կենտրոնացումն ու կատարելագործումը:

Ելնելով ստեղծված ռազմաքաղաքական բարդ իրադրությունից և ղեկավարվելով «ԼՂՀ ՆԽ-ի մասին» ԼՂՀ օրենքի 24-րդ հոդվածով՝ հանրապետության անվտանգության և պաշտպանության ապահովման անհետաձգելի միջոցառումների մշակման ու իրագործման շրջանակներում մինչև ԼՂՀ պաշտպանության նախարարության կազմավորումը՝ 1992 թ. մարտի 26-ին, ԼՂՀ ՆԽ-ին առընթեր ստեղծվեց ԼՂՀ պաշտպանության կոմիտե (ՊԿ)¹⁸ :

Հանրապետությունում ներքին կայունություն պահպանելու նպատակով ԼՂՀ ԳԽ-ի նախագահությունը, ներքին պայմանավորվածության համաձայն, որոշեց ՊԿ նախագահ նշանակել Ս. Սարգսյանին, որին հանձնարարվեց 10-օրյա ժամկետում առաջարկություններ ներկայացնել ՊԿ-ի կառուցվածքի, կանոնադրության և անվանակազմի մասին: Կոմիտեն իր ողջ գործունեությունը պետք է կազմակերպեր ԼՂՀ ԳԽ և ՆԽ որոշումների ու կարգադրությունների հիման վրա: Այդ որոշումից հետո ԳԽ նախագահությունը նպատակահարմար գտավ, որ ԼՂՀ ԳԽ նախագահը մի անգամ ևս հանդիպում ունենա ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հետ՝ երկկողմ հարաբերությունների բարելավման նպատակով: Ա. Մկրտչյանը Երևան մեկնեց մարտի 30-ին և հաջորդ օրը հանդիպեց ՀՀ նախագահի հետ: Զրույցի ընթացքում ՀՀ նախագահը Ա. Մկրտչյանին նորից հասկանալ տվեց, որ նա իր տեղը պետք է գիջի ՀՀ-ական որևէ մեկին, հակառակ դեպքում Հայաստանը կարող է դադարեցնել ռազմական օգնության ցուցաբերումը Արցախին¹⁹:

ԼՂՀ ԳԽ նախագահության և ԻՊՈՒ հրամանատարության ազդեցիկ ղեկավարների մեծամասնությունը դեմ էր նախագահի պաշտոնից Ա. Մկրտչյանի հնարավոր հրաժարվելուն: Մինչդեռ առանց ՀՀ-ի ամենաբարձր մակարդակով օգնության՝ հնարավոր չէր պաշտպանել Արցախը: Փաստորեն, ԼՂՀ ԳԽ նախագահը կանգնած էր դժվարին երկրնտրանքի առջև: Եվ այդ ժամանակ էլ Արցախում արդեն նշմարվում էր երկիշխանության ուրվականը:

Այս համատեքստում չենք կարող չհիշատակել մի իրադարձություն, որը տեղի ունեցավ Արցախում մինչև Ա. Մկրտչյանի մահը: Արտաքին ուժերի ազդեցության ներքո փորձ կատարվեց մասնատել նորաստեղծ պետականությունը, և նման գործընթացի սկիզբը դրվեց Մարտակերտում: Հարկ է նշել, որ այս իրադարձության վերաբերյալ նշված ժամանակաշրջանի քաղաքական գործիչների շրջանակներում մինչ օրս էլ կան իրարամերժ կարծիքներ: Սակայն երևի այդ իրադարձությունից դրդված՝ ապրիլի 3-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը դիմում հղեց ԼՂՀ

18 Տե՛ս ԱՀ կառավարության ընթացիկ արխիվ, ՆԽ 1992 թ. մարտի 26-ի նիստի արձանագրություն, N 3:

19 Տե՛ս Արրահամյան Հ., մշվ. աշխ., էջ 160:

բնակչությանը, որում, մասնավորապես, ասվում էր. «...Հայրենակիցներ, Մենք Ձեզ կոչ ենք անում սթափ և սառնասիրտ գնահատել Արցախի ներկա իրավիճակի ողջ բարդությունը, չենթարկվել խուճապահարույց սադրանքների: Ժամանակի հրամայականն է՝ դիմակայել ցանկացած դավերի: Մեր ինքնապաշտպանական ուժերը հրաշքներ են գործում: Անհավասար կռվում հայրենիքի անձնվեր զավակների թափած արյան գնով թիզ առ թիզ ազատագրվող այս սուրբ հողը չենք զիջի ոչ մեկին: Մեկ անգամ ևս հիշենք. անարգ ու բիրտ ուժին բոլորս միասին դիմագրավենք՝ որպես մեկ հոգի և մեկ մարմին: Պատմության օրենքն է՝ ազատությունը ձեռք է բերվում ուժերի գերագույն լարումով, վերանձնական զոհողությամբ, տքնաջան աշխատանքով և կազմակերպվածությամբ:

Մեր պայքարը խարսխվում է մեր անդառնալի որոշման, անկոտրում կամքի վրա, որոնք կռվաններն են մեր հուսալի ապագայի: Այդ ապագան մեզ է վիճակված կերտելու՝ ի պահ սերունդների»²⁰:

Հակված ենք կարծելու, որ ԼՂՀ-ում Ա. Մկրտչյանի և ՀՅԴ-ի կողմից պատերազմական իրադրությունում ժողովրդավարական պետություն կառուցելու ուղղություն ընտրելը և իշխանության մի շարք կարևոր պաշտոններ ընդդիմադիր գործիչներին հանձնելը ամենևին էլ ճիշտ հաշվարկված քայլ չէր: Նման ռազմավարությունը իրեն կարդարացներ, թերևս, արտաքին միջամտության բացակայության դեպքում: Քանզի հետագայում կնկատենք, որ Ա. Մկրտչյանի մահից հետո պետության ներսում ստեղծվեց քառսային իրավիճակ:

Այսպիսի ծայրաստիճան լարված ռազմաքաղաքական իրադրություն էր տիրում հակամարտության գոտում, երբ տեղի ունեցավ ԼՂՀ-ի ներքաղաքական կյանքի ամենաողբերգական իրադարձությունը, որը շրջադարձային կետ հանդիսացավ ԼՂՀ պետական շինարարության գործընթացում. ապրիլի 14-ի երեկոյան զոհվեց ԼՂՀ ԳԽ նախագահ Ա. Մկրտչյանը:

Մինչ օրս դժվար է պատասխան տալ այն հարցին, թե արդյո՞ք մտատանջություններն ու հուսահատության ապրումները դարձան կատարված ողբերգության պատճառը: Պատմական փաստն այն է, որ Ա. Մկրտչյանը իրենից հետո թողեց քաղաքական ու բարոյական բարձր ժառանգություն. նա ավանդույթներ ստեղծեց, որոնք պահպանվեցին մինչև Գ. Պետրոսյանի հրաժարականը, որը տեղի ունեցավ արդեն պաշտոնական Երևանի հետ ծանր պայքարի պայմաններում:

Ժամանակակիցների վկայությամբ՝ նույն օրը տեղի ունեցավ ԼՂՀ ԳԽ նախագահության և պաշտպանության խորհրդի համատեղ արտակարգ նիստ: Մինչև նիստի բացումը որոշ քաղաքական ուժերի կողմից տարբեր հասցեներով մեղադրականներ հնչեցին պատահարի առնչությամբ: Ստեղծվել էր պայթյունավտանգ իրավիճակ, երբ ամեն մի անզգույշ քայլ կարող էր ապակայունացնել ներքաղաքական իրադրությունը և հանգեցնել անկանխատեսելի հետևանքների: Լիակատար պատրաստականության էին բերվել ԻՊ ուժերում գտնվող ՀՅԴ զինված

²⁰ Տե՛ս Ա.Հ պետարխիվ, ֆ. 254, ց. 1, պ.մ 2, կ.1, ք.36-37:

կազմավորումները, որոնց մեծ մասը կենտրոնացել էր Ստեփանակերտում: ԼՂԸ ԵԳ նախարարի պաշտոնակատար Ա. Իսագուլովի առաջարկությամբ՝ մինչև հետաքննության նախնական եզրակացությունը, ԳԽ նախագահության անդամներին և Ա. Մկրտչյանի ընտանիքի պահպանությունը ուժեղացնելու նպատակով ներքին կարգով համալրվեց ԳԽ պահակախումբը (մեծամասնությունը՝ ՀՅԴ զինված կազմավորումներից): Միաժամանակ ԳԽ նախագահության անդամներին առաջարկվեց մնալ շենքում: Այդ միջոցառումների իրականացման պատասխանատվությունը դրվեց ԼՂԸ ԳԽ պաշտպանության և անվտանգության մշտական հանձնաժողովի նախագահ Վ. Բալայանի վրա:

ԼՂԸ ԳԽ նախագահությունը, ելնելով ստեղծված իրավիճակից և առաջնորդվելով «ԼՂԸ ԳԽ-ի մասին» ԼՂԸ օրենքի 15-րդ հոդվածով և 16-րդ հոդվածի 5-րդ կետով, ԼՂԸ ԳԽ նախագահի պարտականությունները դրեց ԼՂԸ ԳԽ նախագահի տեղակալ Գ. Պետրոսյանի վրա²¹:

ԼՂԸ ԳԽ նախագահ Ա. Մկրտչյանի ողբերգական մահից հետո ստեղծված ներքաղաքական անկայուն իրադրությունը չսասանեց ԼՂ պետականության հիմքերը, ավելին՝ ԼՂԸ իշխանությունների վճռականության շնորհիվ 1992 թ. մայիսին ԻՊ ուժերը կարողացան ազատագրել Շուշին և Լաչինի շրջանի մի մասը՝ ցամաքային կապ հաստատելով հայկական երկու պետությունների միջև: Դա կարելի է համարել հայոց ազատագրական պայքարում արցախահայության ռազմական ու քաղաքական ամենամեծ նվաճումներից մեկը և կարևոր գրավական ԼՂ-ի պետականության ամրապնդման համար:

Հետագա ռազմական գործողությունների ընթացքում 1992 թ. երկրորդ կեսին և 1993 թ. սկզբներին Ադրբեյջանն ամեն ինչ արեց հայկական երկու պետությունների կապն ապահովող Լաչինի միջանցքը գրավելու համար, սակայն 1993 թ. մարտի 27-ից մինչև ապրիլի 5-ը ԻՊՈՒ-ի ստորաբաժանումները ամբողջապես ազատագրեցին Լաչինի և Քելբաջարի տարածքները²²՝ վերջնականապես խորտակելով թշնամու մտադրությունը:

Նկատենք, որ հայկական երկու պետականությունների անվտանգությունն ապահովելու համար ռազմավարական տեսանկյունից նրանց միմյանցից բաժանող կրակակետերի ոչնչացումը դարձել էր հրամայական անհրաժեշտություն: Փաստենք նաև, որ այդ ազատագրված տարածքները ժամանակին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզից արիեստականորեն առանձնացվել էին՝ հեռանկարում Մայր Հայրենիքի հետ նրա միացումը կանխելու համար: Ուստի դրանց վերադարձը փաստացի իրականություն դարձրեց Միացյալ Հայաստանի գաղափարը՝ Հայոց Հայրենիքի արևելյան հատվածում, որովհետև հայկական երկու նորանկախ պետությունները, դառնալով անքակտելիորեն միմյանց հետ շաղկապված մեկ մարմնի մասերը, հետագա ռազմական գործողությունների արդյունքում հստա-

21 Տե՛ս նույն տեղում, թ. 52:

22 Տե՛ս **Բալայան Վ.**, Արցախի պատմություն, Եր., «Ամարաս», 2002, էջ 402:

կեցրին պաշտպանության նվազագույն հնարավորություններ ապահովող իրենց ներկա սահմանները:

Տարոն Վաղիկի Հակոբյան - գիտական հետաքրքրություններն ընդգրկում են Ղարաբաղյան շարժման նոր փուլի պատմությունը: Հեղինակ է 1 մենագրության և շուրջ 10 գիտական հոդվածների, որոնք լույս են տեսել հանրապետական և արտասահմանյան գիտական հանդեսներում: Զբաղվում է նաև Արցախի Հանրապետության պետական շինարարության պատմության և ներքաղաքական գործընթացների լուսաբանման հարցերով:

Էլ. փոստ՝ taronh@rambler.ru

Summary

THE FORMATION OF THE NKR AS A START POINT ON THE WAY TO UNITED ARMENIA

Taron V. Hakobyan (Stepanakert)

Key words – United Armenia, Nagorno Karabakh Autonomous Oblast (Region), Artsakh movement, defence forces, central headquarters, the Republic of Armenia, the Nagorno-Karabakh Republic, Supreme Council.

The political situation formed in the USSR after 1985 ensured the opportunity for raising the idea of united and independent Armenia.

Ignoring the right of the Armenians of Artsakh on self-determination, as well as, the legal and political grounding of their demand, Azerbaijan, with the support of Moscow, again preferred uncivilized methods of solving the problem by organizing ethnic cleansings. This situation kept on till 1991 when the perspective of the collapse of the USSR appeared.

The NKR was formed during the collapse of the USSR on the basis of the national and state formation in the structure of the USSR–NKAO and Shahumyan region, inhabited by the Armenians. Taking into consideration the impossibility of satisfying by the USSR and some international organizations the demand of the reunion with Armenia, as well as, the fact that the problem was considered in the context of territorial claim from Armenia to Azerbaijan, the authorities of the NKR chose the only compromise way out by adopting on September 2 the resolution on declaring the NKR. Thus, on the one hand, NK declared itself independent from Azerbaijan, on the other hand, gave up the idea of reunion with Armenia.

Thus, the NKR was declared in the hardest period of time for the Armenians of Artsakh – in complicated military and political conditions. Still, the declaration of the independent statehood became a new stimulus for resisting the aggression of Azerbaijan, ensuring the security of the population and its peaceful life.

ФОРМИРОВАНИЕ НКР КАК ОТПРАВНАЯ ТОЧКА НА ПУТИ К ЕДИНОЙ АРМЕНИИ

Тарон В. Акопян (Степанакерт)

Ключевые слова - Единая Армения, Нагорно-Карабахская автономная область, Арцахское движение, силы самообороны, центральный штаб, Республика Армения, Нагорно-Карабахская Республика, Верховный совет.

Политическая ситуация, создавшаяся в СССР после 1985 г., предоставила возможность для выдвижения идеи Единой и Независимой Армении. Она возродилась на новом этапе Арцахского движения.

Игнорируя право армянского населения на самоопределение, а также правовое и политическое обоснование его требования, Азербайджан при поддержке Москвы снова предпочел нецивилизованные методы решения проблемы, организовав этнические чистки. Такая ситуация сохранилась до 1991 г., до появления перспективы распада СССР.

НКР сформировалась в процессе распада СССР на основе национально-государственного образования в структуре СССР - НКАО и армянонаселенного Шаумяновского района. Учитывая невозможность удовлетворения требования воссоединения с Арменией в международных организациях, а также рассмотрение проблемы в контексте территориальных притязаний по отношению к Азербайджану со стороны Армении, власти НКР выбрали единственный, компромиссный вариант, 2 сентября приняв резолюцию о провозглашении НКР. Таким образом, Нагорный Карабах, с одной стороны, объявил себя независимым от Азербайджана, а с другой стороны, временно отказался от воссоединения с Арменией.

Таким образом, НКР была провозглашена в тяжелейший для арцахского армянства период, в сложных военно-политических условиях. Тем не менее, провозглашение независимой государственности стало новым стимулом для противостояния агрессии Азербайджана, обеспечения безопасности населения и мирной жизни.

REFERENCES

1. **Abrahamyan H.**, C’akatagrin əndhar’aj, Ye’r., “Amaras”, 2001, (**In Armenian**).
2. AH, petarxiv, fond 254, cank 1, pahpanman miavor 2, kap 1 (**In Armenian**).
3. AH karavarut’yan ənt’acik arxiv, NX 1992t’. marti 26-I nisti ardz’anagrutyun, N 3. (**In Armenian**)
4. **Arutjunjan V.**, Sobytiya v Nagornom Karabaxe, xronika chast’ IV, janvar’ 1992g. – ijul’, Ye’r., “Gitutjun” NAN RA, 1997 (**In Russian**).
5. “Artcax”, Step’anakert, 26. 08.1993 (In Armenian).
6. **Balayan V.**, Drvagner arcaxahayut’yan azatagrakan payqari yev’ petakanakertman patmut’yan (1813-2007t’ t’.), Step’anakert, “Sona”, 2012 (**In Armenian**).
7. **Balayan V.**, Arcaxi patmut’yun, Ye’r., “Amaras”, 2002. (**In Armenian**)
8. **Balayan V.**, Hakobyan T., Patmakan nstash’rjan, LGH’IM zh’ogh’ovrdakan patgamavorneri 20-rd nisti ardz’anagrut’junə, p’astat’gh’t’eri yev’ nyut’eri zh’ogh’ovac’u, Step’anakert, ArPH, 2008 (**In Armenian**).
9. “LGH’ Hanrapetut’yun”, 22.01.1998 (In Armenian).
10. **Hakobyan T.**, LGH’H hrch’akumə yev’ petakan shinararut’yan gorc’ənt’acə (1991-1994t’t.), Ye’r., “Edit’ Pr’int”, 2011 (**In Armenian**).
11. **Ohanjanyan M.**, Ankaxut’yan qaylerə. LGH’H-um anckacvac’ hanraqven yev’ əntrut’yunnerə (1991-1998t’t’.), Step’anakert, “Sona”, 1998 (**In Armenian**).